ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 23 սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1

դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա.Գյուլումյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա.Թունյանի

Քննության առնելով Արթուր Մուսայելյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Արթուր Մուսայելյանը 06.09.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «...ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասը և (կամ) ձևավորված իրավակիրառական պրակտիկան ճանաչել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին (2005 թվականի

փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին և 19-րդ հոդվածի 1-ին մասին) հակասող և անվավեր»:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթի վերլուծությունից բխում է այն, որ անձի կողմից պարտավորեցման հայց ներկայացնելու համար վարչական մարմինը պետք է մերժած լինի բարենպաստ վարչական ակտի ընդունումը: Այս դեպքում վարչական վարույթը հարուցվում է անձի դիմումի հիման վրա, հետևաբար՝ այն պարտադիր պայման է վարչական վարույթ սկսելու համար: Նման պայմաններում ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը պարտադիր է համարում վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտի ընդունման մերժումը:

Դիմողի կարծիքով՝ երբ վարչական մարմինը սեփական նախաձեռնությամբ իրականացված վարույթի արդյունքում կայացրել է միջամտող ակտ, անձը հնարավորություն չի ունենում դատարան դիմելով՝ վերականգնել իր խախտված իրավունքները:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի նախատեսում բարենպաստ ակտ ընդունելու պարտավորեցման հայցով անձի կողմից դատարան դիմելու հնարավորություն այն դեպքում, երբ վարչական վարույթն իրականացվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ, որի արդյունքում ընդունվել է միջամտող վարչական ակտ:

3. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը գտնում է, որ դիմողը, ներկայացնելով վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրակա-նության վերաբերյալ իր փաստարկները, առաջ է քաշում օրենսդրական բացի խնդիր: Օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի տարատեսակ, իրավական կարգա-վորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր

2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ, բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **խախտում է** կամ **կարող է խախտել** կոնկրետ սահմանադրական իրավունք: Զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, **երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ** կամ **օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա**, երբ **առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:** Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի փաստարկներն առ այն, որ «...վիճարկվող դրույթը չի նախատեսում բարենպաստ ակտ ընդունելու պարտավորեցման հայցով անձի կողմից դատարան դիմելու հնարավորություն այն դեպքում, երբ վարչական վարույթն իրականացվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ, որի արդյունքում ընդունվել է միջամտող վարչական ակտ», ակնհայտ անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ՝ դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը չի ներկայացրել հիմնավորումներ առ այն, թե ինչու պետք է վիճարկվող նորմում առկա լինի **տվյալ հարցով դատարանի մատչելիությունն ապահովող երաշխիքը,** ինչպես նաև՝ թե այդպիսի իրավակարգա-

վորման բացակայությունն իր որ սահմանադրական իրավունքն է սահմանափակում կամ որն է այդպիսի իրավակարգավորման բացակայության և իր կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտման միջև պատճառահետևանքային կապը:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը գտնում է, որ տվյալ գործով բացակայում են օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի կողմից քննության առնելու համար սահմանված վերոնշյալ չափորոշիչները: Մասնավորապես, եթե վարչական վարույթը հարուցվում է վարչական մարմնի նախաձեռնությամբ, եզրափակվում է միջամտող կամ զուգորդվող վարչական ակտի կայացմամբ, անձն օժտված է դրա իրավաչափությունը դատական կարգով ստուգելու հնարավորությամբ՝ վիճարկման հայցի շրջանակներում: Հետևաբար, ենթադրյալ օրենսդրական բացի վերաբերյալ դիմողի առաջադրած փաստարկներն ակնհայտ անհիմն են և սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Արթուր Մուսայելյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

23 սեպտեմբերի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-21